ԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ
ՀԱՆԴԻՍԱՒՈՐ
ԹԱՓՕՐ ԱՆԹԻԼԻԱՍԻ
ՄԷԶ**

Կիրակի, 4 Ապրիլ, ԾԱՂԿԱԶԱՐԴԻ տօնին առիթով, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաուորիչ Մայր Տաճարին մէջ պիտի պատարագէ՛

**Գ Ե Ր Շ . Տ . Ե Փ Ր Ե Մ
Ա Ր Գ . Թ Ա Պ Ա Գ Ե Ա Ն**

Սկիզբ ժամերգութեան	ժամը 8:00
Սկիզբ Ս. Պատարագի	ժամը 10:00
Թափօր	ժամը 10:30

Մարկագարդի տօնին առիթով Հայ մանուկներուն ու պատանիներուն իր հայրական խօսքը պիտի ուղղէ և ապա Վեհարանին մէջ զիրենց պիտի ընդունի՛

**Ն . Ս . Օ . Տ . Տ . Ա Ր Ա Մ
Ա . Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս**

.....

**Դ Ռ Ն Բ Ա Ց Է Բ Ի
Ա Ր Ա Ր Ո Ղ ՈՒ Թ Ի Ի Ն**

Նոյն օրը կէսօրէ ետք ժամը 4-ին, տեղի պիտի ունենայ երեկոյեան ժամերգութիւն և ԴՌՆԲԱՑԷՔԻ արարողութիւն, զոր պիտի կատարէ և յաւուր պատշաճի հարգէ՛

**Գ Ե Ր Շ . Տ . Ե Փ Ր Ե Մ
Ա Ր Գ . Թ Ա Պ Ա Գ Ե Ա Ն**

Սիրով կը հրաւիրենք հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու առաւօտեան Ս. պատարագին և յետմիջօրէի արարողութեան, լեցուելու համար Քրիստոսի գալստեան խորհուրդով:

Դ Ի Ի Ա Ն
Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս Ա Ր Ա Ն Ի

**Ս Ե Ի Ա Կ
Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն
Պ Ր Ա Զ Ի Լ Ի
- Ճ Ա Տ Ր Ա Կ Ի -
Ա Խ Ո Յ Ե Ա Ն**

Հանդիմով իմացանք, հայրենի «Հ-1»ի հաղորդման ընթացքին -Կիրակի 28 Մարտ 2004-ի առաւօտեան ժամը 9-ին, որ Պրագիլահայ զէյրուցիի բոռ Սեւակ Մխիթարեան նուաճած է Պրագիլիոյ (Սան Փալօ) հատրակի [շախմատ] ախոյեանութիւնը -հասն տարեկաններու- և իրաւունք տուցած մասնակցելու յաջորդ տարի տեղի ունենալիք հատրակի աշխարհի ախոյեանութեան մրցաշարին:

Կը շնորհաւորենք հայագրի դեռ շատ երիտասարդ ախոյեանը, ցանկալով իրեն նոր յաջողութիւններ, և կը խնդակցինք իր ծնողին՝ բերրիս բարեկամ-ընթերցող Գրիգոր և Ռոզա -Մարիա Մխիթարեաններուն (Սան Փալօ) և մեծ մօր՝ լիբանանաբնակ Տիկ. Ովսաննա Ստեփան Մխիթարեանին:

* *
*

Իմացանք նաեւ, որ Արցախի մէջ, Տիգրան Պետրոսեանի անուան հատրակի մրցաշարին ախոյեանութիւնը շահած է Կարէն Ասրեան:

Այս առթիւ, աշխարհի նախկին ախոյեան Պորիս Սպասի, որ եկած էր մասնակցելու ու հաշակերելու Արցախի մէջ հատրակի ախոյեանական մրցումներու կայացումը, «երախտագիտութեան» մետալով պարգեւատրուած է Արցախի Հանրապետութեան Նախագահ Անուշաւան Դանիէլեանի կողմէ:

Յիշեցնենք, որ Արցախի մէջ հատրակի միջազգային մրցումի մը կայացումին դէմ բողոքած էր Ազոլէհան, զարմացնելով Պ. Սպասիին որ բարձր գնահատած է ձեռնարկը և Արցախի հիւրասէր աշխատասէր ու «շախմատի սիրահար» հայ ժողովուրդին:

«Ն.»

Մ Տ Ա Յ Ա Ն Թ

ԼԵՒՈՆ ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
«ԻՆՉՊԷՍ ԴԻՏԵԼ
ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄԸ»

Պէյրուք - 2004
[Գրքոյկը լոյս տեսած է Արմէն և Միսի Յարութիւնեաններու Ուսխանութեանմբ]

* *
ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ
«ԻՄ ՌՈՒԲԷՆ
ՍԵԻԱԿԸ»
Հալէպ - 2004

**ՌՈՒԲԷՆ ՍԵԻԱԿԻ ԱՆՈՒԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ ՏԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Վերջերս Երեւանի մէջ հրատարակուեցան
1.- Վլատիմիր Պետրոսեանի «Ռուբէն Սեւակ եւ Մեր ժամանակը»
2.- Յովհաննէս Չիլիճիքեանի «Թուրքերու (իբր թէ) Զգիտցած Իրականութիւնները» 4 լեզուներով՝ մէկ հատրդի մէջ, հայերէն, քրքերէն, ռուսերէն և անգլերէն: Այս գիրքերէն ունենալ փախաւորները, նամակով մը կրնան դիմել, և մենք սիրով կը նախընտրենք և կ'ուղարկենք իրենց հասցէին:
Հասցէ՝ MAISON ROUPEN SEVAG
DOMAINE DU LOUP LE VERDON -B 06800 CAGNES SUR MER - FRANCE

TÜRKLERİN (SÖZ DE) BILMEDİKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ
"ATATÜRKÜN MANEVI KIZI SABIHA GÖKÇEN İÇİN,
ERMENİ ASILLIDIR"

DEMIYE CESARET EDEN "AGOS" GAZETESİNİN ÖNÜNDE,
BOZKURLAR GÖSTERİ YAPMISLAR...

GAZETEYE VE GAZETE YÖNETİCİLERİNE KARŞI TEHDİTLER SAVURMUSLAR, BAĞIRIP ÇAĞIRMISLAR. FAKAT O KADAR.

GAZETE BİNASINA GİRMEMİSLER, KIRIP DÖKMEMİSLER.

NASIL OLUR? HAYRET EDİLECEK SEY.

TÜRKİYE HAKİKATEN DEMOKRATLAŞIYOR MU AÇABA?

BİZ, O BOZKURLAR DENİLEN CANAVARLARI, 1946-LARDA İSTANBULDA "TAN" GAZETESİNİN ÖNÜNDE BİZZAT GÖRMÜŞ VE TANIMISTIK.

SÖZ DE ÜNİVERSİTE ÖĞRENCİSİ OLAN BU VAHSİ KURLAR SÜRÜSÜ, SOLCULARIN GAZETESİ OLAN "TAN" MATBAASININ ÖNÜNDE, İLK ÖNCE "SOLCULARA ÖLÜM" DİYE HAYKIRDILAR, SONRA DA GAZETE BİNASINA HÜCUM EDİP, İDAREHANEYİ VE BİLHASSA MATBAAYI KISA BİR ZAMAN İÇİNDE YAKIP YIKTILAR, VE KOCA BİNAYI HARABEYE ÇEVİRDİLER.

O SENELERDE AMERİKAN C.I.A.-NİN EMRİYLE "TAN" GAZETESİNE KARŞI YAPILAN BU SALDIRI, TÜRKİYEDEKİ SOLCULARI TEMİZLEMELİK VE TÜRKİYEYİ NATO-YA SOKMAK İÇİN YAPILAN İŞLEMLERDEN BİRİSİ İDİ.

"AGOS" GAZETESİ DUA ETSİN Kİ, BOZKURLAR, "TAN" GAZETESİNE YAPTIKLARI GİBİ, "AGOS"-U YIKMADILAR.

FAKAT TÜRKİYEDE BÜTÜN GÖSTERİLER DEVLETİN EMRİ İLE YAPILIR. VE BOZKURLAR, YIKMA EMRİ ALMAMISLARDI. YALNIZ "AGOS"-A BİR İHTAR VERDİLER. "AGOS" ÇOK İLERİ GİTMESİN DİYE.

BU ARA DEVLET ÇOK DİKKATLİDİR. MALÜM YA, TÜRKİYE AVRUPA BİRLİĞİNE GİRMEK İÇİN ÇALIŞIYOR.

SİMDİ HİÇ ÖYLE YAKIP YIKMAK OLUR MU?

HER SEYİN ZAMANI, SİRASI VAR.

BU ARADA "AGOS" GAZETESİNE GİDİP, YAPILAN GÖSTERİ İÇİN ÖZÜR DİLEYEN TÜRKLERİN İSİMLERİNİ SAYMAKLA BİTİREMEYİZ.

HAYRET, TÜRKİYEDE NEKADAR DA "DEMOKRAT" İNSAN VARMISDA, BİZİM HABERİMİZ YOKMUS...

SABIHA GÖKÇENİN ERMENİ OLDUGU HABERİ, BİR ÇOK TABU-LARIN YIKILMASINA SEBEP OLDU.

YOK EFENDİM, SABIHA GÖKÇEN ERMENİ DEĞİLMİŞ, BOSNAK-MİS (YANI SİRP ASILLI İMİS).

FAKAT YIKILAN EN BÜYÜK TABU VE EN MÜHİM HABER DE SU.

"MUSTAFA KEMAL. BOSNAKMİS".

BRAVO TÜRKLER, HA BİRAZ DAHA GAYRET. MUSTAFA KEMALIN ASLININ NE OLDUGUNU ORTAYA ÇIKARIN.

FAKAT SİZE BİR SEY SÖYLEYELİM Mİ?

BUGÜN "A.D.N." DENİLEN KONTROL İLE BİNLERCE SENE EVVEL YASIYAN BİR İNSANIN İSKELETİNDEN MİLLİYETİNİ VE ASLININ NE OLDUGUNU ORTAYA ÇIKARIYORLAR.

HODRI MEYDAN BOZKURLAR.

BİR "A.D.N." KONTROLÜ YAPTIRIN DA GÖRÜN, MİLLİYETİNİZİN SİCİLİNİ.

ORTA ASYADAN GELEN TATAR İRKİNDANMISINIZ? YOKSA SAKIN, AMAN HA, RUM VE YA ERMENİMİSİNİZ ACABA?

ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ [ԻԲՐ ԹԷ] ՉԳԻՏՑԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԱԹԱԹԻՒՐՔԻՆ ՀՈԳԵԶԱԻԱԿԸ ԵՂՈՂ ՍԱՊԻՀԱ ԿԷԾՔԶԷՆԻՆ ՀԱՄԱՐ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԻ» ԸՍԵԼ ՀԱՄԱՐԶԱԿՈՂ «ԱԿՕՍ» ԹԵՐԹԻՆ
ՇԷՆՔԻՆ ԱՌՋԵԻ, «ԳՈՐԶ ԳԱՅԼԵՐԸ» ՑՈՅՑ ԿԱՏԱՐԵՐ ԵՆ...

...Ե՛ւ թերթին ե՛ւ թերթին վարիչներուն դժմ սպառնալիքներ տեղացուցեր, պոռացեր կանչեր են:
Բայց՝ ա՛յդքան:

Թերթին շէնքէն ներս չեն մտեր, եւ չեն կոտրեր, և չեն կործաներ:

Ինչպէ՞ս եղեր է: Ծատ զարմանալի բան է: Թուրքիան՝ իրապէս դէպի ժողովրդավարութի՞ւն կը
յառաջանայ արդեօք:

Անք, այդ «Գորշ Գայլեր» ըսուած հրէշները՝ 1946-թ.ներուն Պոլսոյ մէջ, "TAN" լրագրատան
առջեւ անձնապէս տեսած և անոնց «ինչ» ըլլալը հասկցած էինք:

Իբր թէ համալսարանական աշակերտներ եղած այս վայրենի գայլերու վոհմակը, Ձախակողմեան-
ներուն թերթը եղող "TAN" հրատարակչատան առջեւ, նախ՝ «Մա՛հ ձախակողմեաններուն» Նման
լոգունգներ արձակելով, պոռացին և կանչեցին, յետոյ, յարձակեցան թերթին շէնքին վրայ, և հրա-
տարակչատունը և մանաւանդ տպարանը, կարճ միջոցի մը մէջ կոտրեցին, կործանեցին, և մեծ շէնքը՝
աւերակի վերածեցին:

Այդ տարիներուն Ամերիկեան C.I.A-ի հրամանով, "TAN" թերթին վրայ կատարուած այս յար-
ձակումը՝ Թուրքիոյ ձախակողմեանները մաքրագործելու և Թուրքիան "NATO"-ի մէջ ներմուծելու հա-
մար կատարուած գործողութիւններէն մէկն էր:

«Ակօս» թերթը թո՛ղ աղօթէ՛, որ Գորշ գայլերը "TAN" թերթին ըրածնուն նման, «Ակօս»-ն ալ
չկործանեցին: Բայց, Թուրքիոյ մէջ, բոլոր ցոյցերը պետութեան հրամանով կը կատարուին:

Եւ Գորշ գայլերը՝ կործանելու հրաման չէին ստացած: Միայն «Ակօս»-ին ազդարարութիւն մը
տուիլն, որ ան շատ «առաջ» չերթայ:

Սա միջոցին, Թուրք պետութիւնը շատ ուշադիր է:

Ինչպէս որ գիտէք՝ Թուրքիան եւրոպական Միութեան մէջ մտնելու կը ջանայ:

Այդ պատճառաւ, այս շրջանին, անանկ՝ կոտրել - կործանել կ'ըլլա՞յ:

Ամէն բան իր կարգը և ժամանակը ունի:

Մինչ այդ՝ «Ակօս» թերթի խմբագրատունը այցելելով, Գորշ գայլերուն կատարած ցոյցին համար
ներողութիւն խնդրող Թուրք անձնաւորութիւններուն թիւը շատ բարձր է:

Ջարմանալի բան, Թուրքիոյ մէջ որքա՞ն «ժողովրդավարական» համոզումի տէր մարդ կայ եղեր,
որուն մենք տեղեակ չէինք:

Բայց, այս օրերուն, Սապիհա Կէօքչէնին հայ ըլլալուն լուրը, շատ մը "TABOU"-ներու փլելուն
պատճառ եղաւ:

Իբր թէ, «Սապիհա Կէօքչէնը հայ չէ» եղեր: Պոսնիաք է եղեր: [Այսինքն՝ Սերպ է եղեր]:

Եւ այս միջոցին փլած ամէնէն մեծ "TABOU"-ն և ամէնէն կարեւոր լուրը սա է՝

«Մուսթաֆա Քեմալը՝ Պոսնիաք է եղեր»:

Ծնորհաւորութի՛ւն ձեզի, Թուրքե՛ր:

Քի՛չ մըն ալ ջանք ըրէք:

Եւ Մուսթաֆա Քեմալին բուն ծագումին ի՞նչ ըլլալը մէջտեղ հանեցէք:

Բայց, մենք ձեզի բան մը ըսե՞նք...—

Այսօր "ADN" կոչուած քննութեան միջոցաւ, հազարաւոր տարի առաջ ապրած մարդու մը ոս-
կորներէն՝ անոր ազգութիւնը և ծագումը՝ ծճորտութեամբ մէջտեղ կը հանեն:

Ո՛վ Գորշ գայլեր, եթէ բաջութիւնը ունիք, դուք ալ "ADN"-ի քննութիւն մը կատարել տուէք, որ
ձեր ազգութիւնը և ծագումը մէջտեղ ելլէ:

Արդեօ՞ք, Միջին Ասիայէն եկող թաթարներու ցեղէն էք իրապէ՛ս:

Թէ ոչ՝ յունական կամ հայկական ծագո՞ւմ ունիք արդեօք:

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԿԵՐՋԻՆ
 ՀԱՆԳՐՈՒԱՆԷՆ ԱՌԱՋ-
 24 ԱՊՐԻԼԻՆ ԵՒ ԳՈՂՅՈՒԱԾ
 ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ԿՈՐՈՒՍՏԻՆ 89-ՐԴ
 ՏԱՐԵԴԱՐՁԻ ՍԵՄԻՆ

«ՉԱՅՆ ԲԱՐԲԱՌՈՅ ՅԱՆԱՊԱՏԻ»
 ՆԿԱՏՈՒԱԾ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՍԱԿԱՅՆ ՍՏՈ՛ՅԳ, ՍՏՈՅԳ Կ՛ԸՍԵՄ ՉԵՋԻ
 ՎՏԱՆԳԸ ՄԵԾ Է; ԾԱ՛Տ ՄԵԾ
 ԱԻԵԼԻ ՄԵԾ ՔԱՆ ԿՐՆԱՔ ԵՆԹԱԴՐԵԼ
 1911-«ԱՅԼԱՍԵՐՈՒՄ» ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
 [ԿՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ]

ԺԱՆՆԻ ՍԵՒԱԿԻ 27-10-1915-ին, Պոլսոյ Գերմանական
 դեսպանատունը գրած և ուղարկե մը աւելի գորաւոր ամ-
 րաստանական նամակը, խնդրելու պէս կը պահանջէ.-
 «ԱՍՏՈՒԾՈՅ ՍԻՐՈՅՆ՝ ԳԵՐՄԱՆԱԾԻՆԵՐՈՒՆ ԴԷՄ ԿԱՏԱՐՈՒԱԾ
 ԱՅՍ ՍԱՐՍԱՓԵԼԻ ԱՄԲԱՏԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
 ՉԸԼԼԱԼԸ ԱՊԱԾՈՒԾԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԱՄԵՆԱՋԴՈՒ ԿԵՐՊՈՎ
 ՄԻՋԱՄՏԵԾԷՔ ԹՐՔԱԿԱՆ ԻԾՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄՕՏ՝
 ԱՋԱՏԵԾԷՔ, ԻՆՉ ՈՐ ԴԵ՛Ռ ԿԱՐԵԼԻ Է ՓՐԿԵԼ:
 ՓՐԿԵԾԷՔ ԱՆՄԵՂ ԿԱՆԱՆՑ, ԵՐԱԽԱՆԵՐՈՒՆ, ՀԻՒԱՆԴՆԵՐՈՒ ԵՒ
 ԾԵՐԵՐՈՒ ԱՐԻՒՆԸ, ՈՐ ԵՐԿԻՆՔ ԿԸ ԲԱՐՁՐԱՆԱՅ:
 ԳԵՐՄԱՆԻՈՅ ՎՐԱՅ ՆՋՈՎՔ, ԳԵՐՄԱՆԻՈՅ ՎՐԱՅ ԱՆԷԾՔ ԿՐՆԱՅ
 ԳԱԼ, ԵԹԷ ԳԵՐՄԱՆԻԱ ՉԸՆԷ ԱՅՆ ԱՄԷՆԸ, ԻՆՉ ՈՐ ԿԸ ԳՏՆՈՒԻ ԻՐ
 ԵՐԿԱԹԵԱՅ ՈՒԺԵՐՈՒՆ ՆԵՐՔԵԻ»:

ԼՈՋԱՆ - 27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1915

ԺԱՆՆԻ ՍԵՒԱԿ

20 Փետրուար 2004-ին, Երեւանի Ռուբէն Սեւակի անուան դպրոցին մէջ յիշատակուեցաւ, Ռուբէն Սեւակի ծննդեան 119-ամեակը:

Դպրոցի տնօրէնուհիին՝ Տիկին Ճուլիա Ղազարեանին մեզի ուղարկած հանդիսութեան տեսաերիզին շնորհիւ, մենք ալ կրցանք հետեւիլ և վայելել այս հայրենաշունչ տօնակատարութիւնը:

Եւ կրկին, ուրախութեամբ հաստատեցինք, թէ Ռուբէն Սեւակի անուան դպրոցին մէջ, Ռուբէն Սեւակի հայրենասիրական գաղափարները կը շարունակեն աշակերտներուն հոգիներուն մէջ իրենց վերածնունդը ապրիլ:

Նոյն օրը, դպրոցին մէջ կատարուեցաւ նաեւ, Վլատիմիր Պետրոսեանի 2003-ին Երեւանի մէջ հրատարակուած «Ռուբէն Սեւակ եւ Մեր ժամանակը» գիրքին շնորհահանդէսը:

Այս գիրքին մասին մտաւորականներուն և ուսուցիչներուն կատարած ելոյթները շատ իմաստալից էին:

Անոնք վերլուծեցին Վլատիմիր Պետրոսեանին իր նոր գիրքին մէջ ներկայացուցած Ռուբէն Սեւակի «տիպարը»:

Անոնք մատնանշեցին գիրքին մէջի գաղափարներուն զուգահեռ՝ Ռուբէն Սեւակը իբր գաղափարապաշտ և հայրենասէր բանաստեղծ, գրող և հերոս նահատակ, անցեալի և ներկայի մէջ հայութեան համար իբր «Ռահվիրայ» Անոր կատարելիք դերը:

* * *

Բայց այս հանդիսութեան, վաստակաւոր ուսուցչուհիի մը կողմէ իր ելոյթին ընթացքին տուած տեղեկութիւնները, Հայաստանի այսօրուան իսկական իրավիճակը պատկերացնելու տեսակետէն՝ մեզի շատ ցաւ պատճառեց:

Հայաստանի դաշնակցականամիտ կրթական նախարարութիւնը՝ դպրոցներուն մէջ, Ռուբէն Սեւակի հայրենասիրական գաղափարներ դասաւանդելը, ձեռնարկ մը արգիլեր է:

Եւ Ռուբէն Սեւակ հոն կը ներկայացուի եղեր իբր միայն քնարերգակ՝ սովորական բանաստեղծ մը:

Իր անունը չփոխելու և չթրջանալու համար գիտակցաբար դէպի նահատակութիւն յառաջացած Ռուբէն Սեւակի Սուրբ Յիշատակին համար (մանաւանդ Հայաստանի հողին վրայ կատարուած), ասկէ աւելի մեծ սրբապղծութիւն չի կրնար ըլլալ:

1995-թ.ին. Սիոնիստներուն կամակատար, Հ.Հ. նախագահ՝ Լեւոն Տէր Պետրոսեանի օրով, կրթական նախարար մը կար, Աշոտ Բլէեան անունով, որ Հայաստանի դպրոցներուն մէջ դասաւանդուած պատմութեան գիրքերէն Եղեռնի մասին գրութիւնները վերցնել ուզած էր:

Այսօրուան դաշնակցականամիտ կրթական նախարարը, իրականութեան մէջ ի՛նչ տարբերութիւն ունի իր հերթին սիոնականամէտ և ըստ ոմանց հոովմէադաւան գործակատար Աշոտ Բլէեանէն:

Հայկականութեան տեսակէտով՝ նոյն բաներն են: «Հայկական ոգին» սպաննող դրուժաններ:

**

2003-թ.ին, Վլատիմիր Պետրոսեանի «ՌՌԻԲԷՆ ՍԵՒԱԿ ԵՒ ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ» գիրքին տպագրութեան օրերուն, տարբեր ձեւով՝ բայց նոյնիմաստ իրավիճակի մը առջեւ գտնուեցանք:

Այդ օրերուն Վլատիմիր Պետրոսեան չէր ուզած, որ հրապարակենք այս ցաւալի պատահարը:

Երբ այսօր կը կրկնուին նոյնիմաստ և դաշնակցականներու յատուկ պառակտիչ դէպքերը, Վլատիմիր Պետրոսեանի ներողամտութիւնը խնդրելով՝ կը հրապարակենք հետեւեալ եղելութիւնը:

Հեղինակը իր «Ռուբէն Սեւակ Եւ Մեր Ժամանակը» գիրքին տպագրութեան համար, 2003-ին կը դիմէ Երեւանի «Ջանգալ» հրատարակչատան, որ այն օրերուն Հայաստանի լաւագոյն հրատարակչատուններէն մէկն էր: Կը գոյանայ համաձայնութիւն գիրքի լոյս ընծայման շուրջ:

Բայց, միջոց մը յետոյ, «Ջանգալ» հրատարակչատունը Վլատիմիր Պետրոսեանին կը պատասխանէ, որ «Իրենք պիտի չկրնան հրատարակել այս գիրքը»:

Պաշտօնապէս ներկայացուած մերժումին պատճառը...

1.- Տպարանին շատ գործ ունենալն է: Իսկ անպաշտօն և չխոստովանուած պատճառը...

2.- Վլատիմիր Պետրոսեանին «Ռուբէն Սեւակ Եւ Մեր Ժամանակը» գիրքին մէջ նշուած իրականութիւններն են:

Այս իրականութիւնները, զորս Ռուբէն Սեւակ իր գրութիւններուն մէջ կը ձաղկէր, այդ շրջանին (1908-թ.ներուն) թուրքերուն հետ գործակցողներն էին, և մանաւանդ՝ Դաշնակցականները:

Այս իրականութեան լոյսին տակ, Վ. Պետրոսեան կը հրապարակէր այս գիրքին մէջ (բոլորին ծանօթ) եղելութիւնները, որ Հ.Յ.Դ.Ն, 1905-էն մինչեւ 1915 և նոյնիսկ աւելի ետք, շարունակեց Իթթիհատական թուրքերուն հետ գործակցիլ: Որուն յաջորդէց 24 Ապրիլ 1915-ի Եղեռնը:

Նոյն գիրքին մէջ, Վ. Պետրոսեան նշած էր նաեւ այս կուսակցութեան քաղաքական հայավնաս դիրքորոշումներն ու արարքները, որոնք կը շարունակուին մինչեւ մեր օրերը:

Եւ ո՛վ է եղած այդ շրջանի «Ջանգալ» հրատարակչատան բուն պատասխանատուն՝ Մեսրոպ Արքեպս. Աշճեան: Եւ ո՛վ էր Մեսրոպ Արքեպս.:

Մինչեւ 1995-թ.ները Արեւելեան Ամերիկայի Անթիլիասական եկեղեցիին առաջնորդն էր:

1995-ին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը՝ Գարեգին Բ. (Դաշնակցականներու կողմէ իրեն տրուած մակդիրով) «դաւաճանեց» այս կուսակցութեան և Հա-

յաստանի նախագահ Լ. Տէր Պետրոսեանի թիկունքով Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուեցաւ:

Իսկ Մեսրոպ Արքեպս. Աշճեան (ըստ դաշնակցականներու), մահացու «յանցանք» մը գործեց, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա.ի կողքին դիրքորոշուելով: Որուն հետեւանքով Կուսակցութիւնը զինք հեռացուց Արեւելեան Ամերիկայի առաջնորդի պաշտօնէն:

Եւ տարօրինակը հոն է, որ Մեսրոպ Արքեպս. որ եղած էր դաշնակցականամէտ հոգեւորական ու մինչեւ վերջերս պայքարած Մայր Աթոռի դէմ, կերպով մը Ս. Էջմիածին ապաստանեցաւ: Եւ հոն, Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին հովանաւորութեամբ, Հայաստանի մէջ, իբր մտաւորական հոգեւորական մը գործել սկսաւ:

Բայց Հ.Յ.Դ.ի անդամ մկրտուածի մը համար կը թուի, թէ շատ դժուար է իր ուխտէն հեռանալը: Աղանդաւորներուն նման են:

Անգամ մը որ աղանդաւորին ուղեղը խաթարուի՝ ապաքինումը շատ դժուար է: Մեսրոպ Եպս.ին պարագան ալ նոյնը եղած կրնայ ըլլալ:

Հակառակ, որ ան Դաշնակցական դեկավարութեան կողմէ հեռացուած և «աքսորուած» էր՝ բայց Մեսրոպ Արքեպս. Աշճեան՝ իբր աղանդաւոր միշտ մնաց դաշնակցական, գործեց մինչեւ վերջ իբր այդպիսին, ըլլա՛յ «Ջանգալ» հրատարակչատան մէջ և ըլլա՛յ Հայաստանի հեռատեսիլէն իր կատարած ելոյթներով:

Բայց ի՞նչ է Ռուբէն Սեւակի յանցանքը որ

այս կուսակցութեան մարդիկ, մինչեւ այսօր կը շարունակեն անտեսել և մոռացութեան ենթարկել Ռուբէն Սեւակը:

Որովհետեւ Ռուբէն Սեւակ մարգարեացաւ իր գրութիւններով, և տեսաւ վտանգը:

Այն մեծ վտանգը որուն տարողութիւնը, դեռ 1911-թ.ին, այսպէս պատկերացուց. «ՍԱԿԱՅՆ ՍՏՈՅԳ Կ'ԸՍԵՄ ՁԵՁԻ. ՎՏԱՆԳԸ ՄԵԾ Է, ԾԱ՛Տ ՄԵԾ, ԱԻԵԼԻ ՄԵԾ ԶԱՆ ԿՐՆԱՆՔ ԵՆԹԱԴՐԵԼ»:

Բայց այս կուսակցութեան մարդիկ, աղանդաւորներու նման, չեն սիրեր իրականութիւնները: Որովհետեւ այս տիպի շարքայիները վարժ են հրահանգով գործելու: Պատուէր կը կատարեն:

Իրենց գործածած «պատմունան»ը կեղծ է: Իբր թէ Ազգայնական են: Բայց կը մասնակցին Ընկերվարականներուն համագումարներուն, իբր՝ Ընկերվարական:

Բնչպես որ ատենին [1940-ներուն] հակած էին ֆաշիստներուն կողմը: Եւ գործակցեցան Նացի Հիթլերականներուն հետ:

Իբր թէ կը պաշտպանեն հայկական դատը, հայկական իրաւունքները: Բայց բոլոր գիտակից հայերը անդրադարձած են, որ անոնք ստեպ գործած են հայկականութեան շահերուն ի վնաս, մինչեւ իսկ գործակցած հայութեան թշնամի Սիոնիստներուն հետ:

**

Եթէ, այս տիպի կուսակցականները, հայութեան ծառայել ուզէին՝ 1915-էն յետոյ պիտի անդրադառնային իրենց կատարած սխալը, և պիտի հասկնային, որ Սիոնիստներուն հետեւելով, ինչպէս էին Իթթիհատականներուն ծուղակը: Եւ, 1918-էն սկսեալ, պիտի փնտռէին «իրականութիւնը»:

Պիտի փնտռէին՝ 1915-ի Եղեռնին իրական պատասխանատուները:

Ինչպէս որ ասկէ առաջ գրեցինք՝ Ֆրանսայի, Անգլիոյ և Ամերիկայի մէջ, մեծ թիւով հրատարակութիւններ կային Գերմանական պատասխանատուութիւնը ապացուցանող:

Եւ ամէնէն կարելորը՝ Ռուբէն Սեւակի գերմանացի կինը՝ Ժաննի Սեւակը կար, որ 1915-ին իր մօրը հետ աշխատեցաւ փրկել իր ամուսինը, բայց չյաջողեցաւ, գերմանական մեղսակցութեան պատճառաւ: Եւ Ժաննի Սեւակ, բոլորէն աւելի լաւ տեսած էր իրականութիւնը:

1918-ին Պոլիս հրատարակուած թերթերուն մէջ, լոյս տեսած էին Ժաննի Սեւակի գերմանացիներուն դէմ կատարած յայտարարութիւնները, որոնցմով ան գերմանացիները կ'ամբաստանէր, որ անոնք չեն ուզած իր ամուսինը՝ Ռուբէն Սեւակը ազատել:

Ժաննի Սեւակ Սեպտեմբեր 1915-ին, Ջուիցերիա հաստատուած էր, և Լոզանէն տեւական դիմումներ կը կատարէր Պոլսոյ Գերմանական դեսպանատուն:

Ժաննի Սեւակի 27 Հոկտեմբեր 1915 թուակիր նամակը, Լոզանէն Պոլսոյ Գերմանական դեսպանատուն հասցեագրուած, ահռելի ամբաստանագիր մըն է ուղղուած Գերմանացիներուն դէմ:

Մեր համոզումով՝ Ժաննի Սեւակի այս նամակը 1915-ի Եղեռնի վերաբերեալ, ամենակարեւոր փաստաթուղթն է:

Պիտի խնդրենք մեր ընթերցողներէն, որ ուշադրութեամբ կարդան այս նամակին ամէն մէկ տողը, ամէն մէկ բառը:

Արդարեւ Ժաննի Սեւակ, 1915-ի Եղեռնին իբր պատասխանատու Գերմանացիները ամբաստանելէ յետոյ, սա հրակէզ տողերը կը գրէր.

«ԳԵՐՄԱՆԻՈՅ ՎՐԱՅ ՆՁՈՎՔ, ԳԵՐՄԱՆԻՈՅ ՎՐԱՅ ԱՆԷԾՔ ԿՐՆԱՅ ԳԱԼ, ԵԹԷ ԳԵՐՄԱՆԻԱ ՉԸՆԷ ԱՅՆ ԱՄԷՆԸ, ԻՆՉ ՈՐ ԿԸ ԳՏՆՈՒԻ ԻՐ ԵՐԿԱԹԵԱՅ ՈՒԺԵՐՈՒՆ ՆԵՐՔԵԻ»:

Այս ի՛նչ մարգարէական նախատեսութիւն է և ի՛նչ հայաշունչ նզովք:

Գերմանացիները, հակառակ Ժաննի Սեւակին ազդարարութեան, շարունակեցին թուրքերուն թիկունք կանգնիլ և անխղճօրէն ցեղասպանութեան ենթարկել Հայ Ազգը:

Եւ Ժաննի Սեւակին մարգարէական անէծքը և հայաշունչ նզովքը (→ էջ 3)

24 ԱՊՐԻԼԻՆ ԵՒ ԳՈՂԾՈՒԱԾ ՀԱՅՐԵՆԻԶԻՆ ԿՈՐՈՒՍՏԻՆ... (Ծար էջ 2-էն)

իրականացաւ:

Հայկական ցեղասպանութեան մեղսակից Գերմանացիները, այս անգամ հրեական սատանայական դաւադրութեամբ ծուղակը ինկան: 1945-ին, «Հրեաները ջարդած են ըսելով» Գերմանիոյ վրայ նզովք և անէծք տեղալ սկսաւ: Եւ այս նզովքը և անէծքը կը շարունակեն տեղալ, մինչեւ այսօր, Գերմանացիներուն վրայ, «իբր հրեաներու ցեղասպանները»:

**

Եւ Դաշնակցականները երբեք չհետաքրքրուեցան ժաննի Սեւակով. ընդհակառակը՝ անտեսեցին զինք:

1918-ին, զինադադարէն յետոյ, ժաննի Սեւակ իր տղոց հետ, Փարիզ հաստատուած էր:

Եւ ան, Հոկտեմբեր 1919-ին, Հայաստանի խորհրդարանի նախագահ Աւետիս Ահարոնեանին, որ Սեւրի դաշնագրին համար Փարիզ եկած էր, նամակ մը գրեց, խնդրելով իրմէ, որ իր զաւակներուն՝ Լեւոնի և Ծամիրամի հայեցի դաստիարակութիւն ստանալուն օգտակար ըլլայ [«ՆԱՅԻՐԻ»-ի 26 Օգոստոս 1995 թիւին մէջ, Աւետիս Ահարոնեանին պատասխան նամակը հրատարակած էինք]:

Այս նամակին մէջ, Աւետիս Ահարոնեան շատ քաղաքավարութեամբ կը մերժեր ժաննի Սեւակին՝ նահատակ Ռուբէնի զաւակները հայ մեծցնել ուզող խեղճ մօր բաղձանքը:

Ժաննի Սեւակ մինչեւ 1967 տարեթիւը Փարիզ ապրեցաւ: Բայց, մինչեւ այս թուականը, դաշնակցականներէն ոչ մէկը այս հէք այրիին չհարցուց, թէ ինչու, հայ ազգին ցեղասպանութեան իբր պատասխանատու կ'ամբաստանէր Գերմանացիները: Ինչո՞ւ գերմաներէն չէր խօսեր, և ինչո՞ւ իր զաւակներուն գերմաներէն չսորվեցուց:

Եւ ոչ մէկը չհետաքրքրուեցաւ ժաննի Սեւակով, ոչ ալ Ռուբէն Սեւակի որբ զաւակներուն՝ Լեւոնով և Ծամիրամով:

Հակառակ այս հայկական անտարբերութեան և հայերու կողմէ անտեսուած ըլլալուն, ժաննի Սեւակ միշտ «Հայ» մնաց և հայ ըլլալով ալ մահացաւ 28-12-1967-ին: Իր կատարած կտակին համաձայն յուղարկատրութեան արարողութիւնը կատարուեցաւ 30-12-1967-ին, Նիսի Հայաստանեայց Առաքելական Սուրբ Աստուածածին եկեղեցիին մէջ:

“GENOCIDE, IMPUNITY AND JUSTICE”

**INTERNATIONAL
CONFERENCE**

Under the Auspices of the
President of the
Republic of Lebanon

**HIS EXCELLENCY
GENERAL EMILE LAHOUD**

Organized by
THE ARMENIAN CATHOLICOSATE OF CILICIA

22 - 23 April 2004, Antelias - Lebanon

Հ.Բ.Ը.Մ. - Հ.Ե.Ը.

«ԱՆԴՐԱՆԻԿ»
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Առաջին Անգամ Ըլլալով
ԱՐԱ ԳԷՈՐԳԵԱՆ
Լիբանանի Մէջ

Սիմֆոնիք նուագախումբի Ընկերակցութեամբ

Խմբավար՝
ՅԱՐՈՒԹ ՅԱԶԼԵԱՆ
Պարային ու Բեմական նորարարութիւններով

6, 7, 8, Մայիս 2004, Ժամը 21:00,
«Զօր. էմիլ Լահուտ» նորակառոյց Կեդրոն, Նազգաշ:

Գին՝ 15,000, 30,000, 50,000 և 100,000 Լ.Ո.

Տոմսերը կը վաճառուին ՀԲԸՄ Տեմիրճեան Կեդրոն:
Հեռ: 04/523043/44, գրատուն Շիրակ 01/445829,
գրատուն Համազգային 01/241263,
Hotel Promenade 01/874774 և տիսֆօթէֆ JEKA:

**ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՈՒԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ ՏԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Վերջերս Երևանի մէջ հրատարակուեցան

- 1.- Վլատիմիր Պետրոսեանի «Ռուբէն Սեւակ եւ Մեր ժամանակը»
- 2.- Յովհաննէս Զիլինկիրեանի «Թուրքերուն (իբր թէ) Զգիտցած Իրականութիւնները» 4 լեզուներով՝ մէկ հատորի մէջ, հայերէն, բրեյլերէն, ռուսերէն և անգլերէն: Այս գիրքերէն ունենալ փառաբողոքները, նամակով մը կրնան դիմել, և մենք սիրով կը նուիրենք և կ'ուղարկենք իրենց հասցէին:

Հասցէ՝ MAISON ROUPEN SEVAG
DOMAINE DU LOUP LE VERDON -B 06800 CAGNES SUR MER - FRANCE

TÜRKLERİN (SÖZ DE) BILMEDİKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ
 FRANSIZ YAZARI
 PIYER LOTI
 NIÇIN TÜRK-DOSTU IDI ?
 VE NIÇIN TÜRKLERİ ÇOK METH EDERDI ?

ÇUNKÜ PIYER LOTI OGLANCI IDI. 40 SENE FRANSIZ DONANMASINDA DENİZ SUBAYU-
 CI YAPAN PIEYER LOTI VAZIFESI ICABI ISTANBULA DA UGRAMISTI.

TANINMIS ROMANLARINDAN "AZIYADE" (1879) VE "DÉSENCHANTÉES" ISTANBULU
 ZIYARETİNİN TESİRİ İLE (1906) YAZILMISTIR.

PIYER LOTI BİR ÇOK KERELER ISTANBULU ZIYARET ETTI.

VE SİZ PIYER LOTİNİN OGLANCI OLDUGUNU ÖGRENMISTİNİZ.

VE PIYER LOTİNİN SON ZIYARETLERİNDE ONA HEDİYELİK EN KÖRPE VE GÜZEL OG-
 LANLARI SUNDUNUZ.

VE ONDAN SONRA PIYER LOTI TÜRKLERİ METH ETTI DE METH ETTI.

TABIHI AGZİNİN SUYU AKARAK VE GENÇ OGLANCIKLARI BEKLIYEREK.

SİZ TÜRKLER, ADAM KANDIRMAKTA BİR TANESİNİZ.

SİZ ÇOK İYİ BİLİRSİNİZ KARSINIZDAKİNİN ZAYIF TARAFINI.

BİR KISMİNİ PARA İLE KANDIRIRSİNİZ.

BİR KISMİNİ KADIN SUNARAK.

BİR KISMİNİ DA PIYER LOTI GİBİ GÜZEL ÖĞLANLAR SUNARAK.

VE BİR ÇOGUNU DA MİDELERİNDEN AVLARSİNİZ.

VE BİLHASSA İYİ TIYATRO OYNARSİNİZ. YÜZÜNÜZE KUZU POSTU İLE ÖRTEREK, VAHSI
 HAYVAN KARAKTERİNİZİ GÖSTERMEZSİNİZ.

FAKAT SON ZAMANLARDA FOYANIZ MEYDANA ÇIKTI.

HELMUT KOHL-UN SAĞ KOLU VE ALMANYANIN ESKİ ÇALISMA BAKANI BLUM,
 MASKENİZİ YIRTTI VE HAKIKI YÜZÜNÜZÜ ORTAYA ÇIKARDI.

VE BUGÜNKÜ ALMANYA BASBAKANI SCHRÖEDERİN, SİZİN AVRUPA ORTAK PAZARINA
 SOKMAK İÇİN GAYRETLERİ TERS TEBKI YARATTI.

VE BUGÜN ALMANYA HALKİNİN BÜYÜK ÇOGUNLUGU, SİZİN AVRUPA EKONOMİK
 BIRLIGINE GIRMENİZE KARSİ.

ALMANLAR, BİLHASSA SİZİN NE OLDUGUNUZU, ALMANYADA YASIYAN 5 MİLYONDAN
 FAZLA TÜRKLERDEN ÖGRENDİLER.

FRANSANIN VE DİGER AVRUPA DEVLETLERİNİN HALKLARİNİN BÜYÜK ÇOGUNLUGU
 DA SİZİN AVRUPA BIRLIGINE GIRMENİZE KARSİ.

BUNDAN SONRA AMERİKANIN VE DÜNYA PARA BABALARİNİN GÖRÜNMEZ TESKILA-
 TININ, SİZİN LEHİNİZDE AVRUPALILARI ZORLAMALARI DA FAYDA ETMİYECEK.

ÇÜNKÜ AVRUPA HALKI ARTIK ÖGRENDİ Kİ FRANSANIN ESKİ CUMHUR BASKANI VALE-
 RI JISKAR DESTENİN DE DEDİGİ GİBİ, "TÜRKLER AVRUPA BIRLIGINE GİRDİKLERİ GÜN,
 AVRUPA YIKILIR".

ԿԸ ՆՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ [ԻՐՐ ԹԷ] ՉԳԻՏՑԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՖՐԱՆՍԱՑԻ ԳՐՈՂ
PIERRE LOTI
ԻՆՉՈ՞Ւ ԹՐՔԱՍԷՐ ԷՐ:
ԵՒ ԻՆՉՈ՞Ւ
ԹՈՒՐՔԵՐԸ ՇԱՏ ԿԸ
ԳՈՎԱԲԱՆԷՐ

Որովհետեւ Pierre Loti-ն *բնտոֆիլ* էր:

40 տարի ծովային սպայ ըլլալով, ֆրանսական նաւատորմին մէջ ծառայած Pierre Loti, պաշտօնի բերմամբ Պոլիս ալ այցելած էր:

Իր ծանօթ վէպերէն՝ "AZIYADE"ն և "DESENCHANTÉES"ն՝ Պոլիս այցելութեան տպաւորութեամբ գրուած են:

Pierre Loti-ն քանի մը անգամ Պոլիս այցելեց:

Եւ դուք՝ թուրքերդ, Pierre Loti-ին *բնտոֆիլ* ըլլալը տեղեկացած էիք:

Եւ Pierre Loti-ին վերջին Պոլիս այցելութեան օրերուն, անոր ամէնէն գեղեցիկ տղաքները «Իրր նուէր» հրամցուցիք:

Եւ անկէ յետոյ, Pierre Loti-ն թուրքերը գովեց ու գովեց:

Բնական է՝ բերնին ջուրերը վազելով և գեղեցիկ տղոց սպասելով կատարեց այս գովասանք-ները:

Դուք, թուրքերդ, մարդ համոզելու մէջ՝ մէկ հատիկ էք:

Դուք, շատ լաւ կը հասկնաք, ձեր դիմացիներն «տկար կողմը»:

Մէկ մասը դրամով կը կաշառէք, մէկ մասին՝ կին կը հրամցնէք: Մէկ մասին ալ՝ Pierre Loti-ին ըրածնուդ պէս, գեղեցիկ տղաք կը հրամցնէք:

Եւ շատերն ալ՝ իրենց ստամոքսներէն «կ'որոսաք»:

Եւ մանաւանդ լաւ թատրոն կը խաղաք: Ձեր երեսը գառնուկի մորթով «կը գոցէք» և ձեր վայրենի, կենդանական նկարագիրը կը ծածկէք:

Բայց, վերջին շրջաններուն, ձեր կատարած «թատրոն»ը մէջտեղ ելաւ:

HELMUTH KOHL-ին աջ բազուկը եղող և Գերմանիոյ նախկին Աշխատանքի նախարար BLUM-ը՝ ձեր քողը պատռեց և ձեր իսկական «երեսը» մէջտեղ հանեց:

Եւ Գերմանիոյ այսօրուան վարչապետ SCHROEDER-ին ձեզ երոպական Միութեան մէջ առնել տալու համար կատարած ջանքերը, հակառակ ազդեցութիւն գործեցին:

Եւ այսօր Գերմանիոյ ժողովուրդին մեծամասնութիւնը՝ թուրքերուն երոպական Միութիւն մտնելուն հակառակ է:

Ֆրանսայի և միւս երոպական պետութիւններուն ժողովուրդներուն մեծամասնութիւնն ալ՝ ձեր երոպական Միութիւն մտնելուն դէմ են:

Եւ ասկէ յետոյ, Ամերիկայի և աշխարհի մեծ դրամատէրերուն անտեսանելի կազմակերպութեան՝ թուրքերուն ի նպաստ երոպական պետութիւններուն վրայ կատարելիք ճնշումներն ա՛լ օգուտ պիտի չունենան:

Որովհետեւ երոպական ժողովուրդները այլեւս հասկցան, թէ Ֆրանսայի նախկին հանրապետութեան նախագահ՝ VALERY GISCARD D'ESTENG-ին ալ ըսածին պէս՝ «Թուրքերուն երոպական Միութիւն մտած օրը՝ երոպան կը փլչի»:

ՉՕՆ՝ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԻՐՈՂ
ՀԱՅՐԵՆԱՍԷՐՆԵՐՈՒՆ

«ՉԱՅՆ ԲԱՐԲԱՌՈՅ ՅԱՆԱՊԱՏԻ»
ՆԿԱՏՈՒԱԾ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ

ԵՒ ՓՐՅՈՒԵԼԻՔ ՈՒՂԵՂՆԵՐ»

ԱՅՍ ԳԻՐԸ ԿԸ ՉՕՆԵՆՔ ԱՆՈՒՆՈՎ ՄԻԱՅՆ
ՀԱՅ՝ ԱՅՆ ԿԵՂԾ ԱԶԳԱՍԷՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒՆ,
ՈՐՈՆՑ ՍԽԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ՝

24 ԱՊՐԻԼ 1915-ԻՆ ՅԱՆԳԵԾԱԻ

ԱՅՍ ԳԻՐԸ ԿԸ ՉՕՆԵՆՔ ԱՆՈՒՆՈՎ ՄԻԱՅՆ

ՀԱՅ՝ ՍՓԻՒՌԷԻ ԱՅՆ ԿԵՂԾ ԱԶԳԱՍԷՐ

ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒՆ,

ՈՐՈՆՑ ՍԽԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ՆՈՐ 24 ԱՊՐԻԼՆԵՐՈՒ ԿՐՆԱՅ ՅԱՆԳԻԼ:

ԱՊՐԻԼ 1985

Յ. Չ.

ՏԵՍՆԵԼՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՐԻԼ 2004-Ի ՔԱՈՍԱՅԻՆ
ՎԻՃԱԿԸ, ՄՐՏԻ ԽՈՐ ՑԱԻՈՎ ՊԻՏԻ ՆՇԵՆՔ, 1985-Թ.ՆԵՐԷՆ
ՍԿՍԵԱԼ ՄԵՐ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

[ՎՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ]

«24 Ապրիլ 1915-ի աղէտը՝ անոնց դաս չէ եղած տակաւին: Եւ դեռ այսօր, այս կազմակերպութիւնները, արեւմտեան պետութիւններուն ձեռքը գործիք ըլլալով, ազգասիրութեան կեղծ դիմակին տակ, կը շարունակեն Հայաստանին և անոր կառավարութեան դէմ իրենց թոյնը թափել»:

«Այս գիրքը Սփիւռքի կեղծ ազգասէր առաջնորդներուն՝ Մայր հայրենիքին պատճառելիք վտանգներու մտահոգութեամբ է գրուած:

Մաղթենք, որ «պատմութիւնը կրկնութիւն է» բոլորիս ծանօթ խօսքը, հայ ազգին համար չիրականանայ:

Ա՛լ կը բաւէ, հայ ազգին կրած տառապանքը»:

ԱՊՐԻԼ 1985- «ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ ԵՒ ՓՐՃՈՒԵԼԻԶ ՈՒՂԵՂՆԵՐ»

«Ապրիլ 1985-թ.ին, այս մասին մեր գրածները՝ այսօրուան Հայաստանի վիճակին նախատեսութիւնն են: Նկատի ունենալով սա վերջին շրջաններուն, անելի ճիշդ՝ 1988-թ.ի Փետրուարէն սկըսեալ հայ ժողովուրդին ապրած տաժանելի, տառապալի օրերը Հայաստանի և ըՍփիւռքի մէջ: Կը տեսնենք ցաւով, որ մեր ժողովուրդը սխալ քաղաքականութեամբ կ'առաջնորդուի, դէպի արկածախնդրութիւն կ'երթայ:

Գիրքին այս մասին մէջ եղած նախատեսութիւնը, թէ՛ նոր 24 - Ապրիլներ կրնան պատահիլ, կերպով մը իրականացած է Սումկայիթի մէջ: Նոր 24 Ապրիլներու նախերգանքը չէ՞ ասիկա:

Մեր կեղծ առաջնորդներուն սխալ ցուցմունքները՝ հայ ժողովուրդը նոր եղեռններու կը տանին, նոր ցաւերու: Մեզ շատ կը մտահոգէ այս պարագան:

Մեր տեսակէտը այն է, որ Ղարաբաղի հարցին մէջ, մեր ժողովուրդը սխալ ճամբայ ընտրեց: Ղարաբաղը համեմատաբար երկրորդական ցաւ է:

Բուն ցաւը՝ Արեւմտեան Հայաստանի կորուստի ցաւն է:

Ա՛յն ժողովուրդին զոր այսօր Սփիւռք կը կոչենք, անոր պատկանող Արեւմտեան Հայաստանին կորուստին ցաւն է:

Յայտնի բան էր, որ Ղարաբաղի ցոյցերով, Ազերիներու դէմ կատարուած ցոյցերով, այս ժողովուրդը ի վերջոյ պիտի դառնար Խորհրդային Միութեան դէմ, և այս շարժումը մեզ պիտի տանէր դէպի այն սխալ արարքներուն, որոնք կատարուեցան «Զուարթնոց» օդանաւակայանին մէջ:

Այդ սխալ արարքները զորս կատարեցին խելառ ամբոխները՝ նախատեսելի էին: Երբ ժողովուրդը սխալ կ'առաջնորդուի, արդիւնքը տարբեր չի կրնար ըլլալ: Երբ Ղարաբաղ կ'ըսենք, ասոր կը հետեւի Նախիջեւանը:

Երկուքն ալ, անտարակոյս, մեծ կորուստներ են մեզի համար:

Ի այց այս սեօ կորուստները ունեցանք պատճառաւ այն մեծ սխալներուն, որոնք ծնունդ առին 1918-1920 Հայաստանի Դաշնակցական կառավարութեան կողմէ, որ բացի թշնամութենէն, ոչ մէկ մօտիկութիւն ցոյց տուաւ այդ տարիներու Սովետական Միութեան:

Եւ այս պատճառով է, մեծ մասամբ, որ կորսնցուցինք Արեւմտեան Հայաստանը, և ասոր հետ միասին՝ Ղարաբաղն ու Նախիջեւանը:

Այս պատասխանատուութիւնը կրող ծանօթ կուսակցութեան ներկայ վարիչները՝ այսօր կրկին այդ մեծ սխալը կը գործեն Սփիւռքի մէջ: Եւ ուրախութեան ցոյցեր կը կատարեն, երբ Ղարաբաղը պահանջելու նպատակով իրենց կողմէ ոտքի հանուած խելագարած զանգուածները ի վերջոյ, կը հակադրեն հայ ժողովուրդին միակ լեւարանը հանդիսացող Ռուս ժողովուրդին՝ անոր դէմ հրահրելով թշնամութիւն: Այս է մեծագոյն վտանգը:

Կը մաղթենք, որ յառաջիկայ օրերն ու ամիսները իրաւունք չտան մեզի, մեր կանխատեսութեան:

ԻՍԿ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ, ԴԱՐԵՐ ԾԱՐՈՒՆԱԿ, ՄԻԱԿ ԹՇՆԱՄԻ ՄԸ ՈՒՆԵՑԱԾ Է ԵՒ ՈՒՆԻ, ԱՅՆ ԱԼ ԹՈՒՐՔԻԱՆ Է: Որուն զինակիցները և դաշնակիցներն են Արեւմտեան պետութիւնները»:

Նոյեմբեր 1989- «Ռուբէն Սեւակի Գաղափարականը»

**

«Տարիներէ ի վեր Սովետական Միութիւնը խորտակելու միտող Արեւմտեան պետութիւնները՝ հրահրեցին և շահագործեցին «Ղարաբաղի հարցը»

Այսօր Հայաստանի և նաեւ Սփիւռքի հայ ժողովուրդը, այլևս չի խօսիր Կարսի, Վանի և Մուշի մասին:

Չի խօսիր ցեղասպան թուրքին մասին: Ի մեծ ուրախութիւն թուրքերուն: Մոռցուած է՝ թուրքիոյ կողմէ գողցուած Արեւմտեան Հայաստանը: Եւ կը խօսուի միայն Ղարաբաղի մասին:

Եւ այսօր, Արեւմտեան պետութիւններուն զինակիցը եղող ցեղասպան թուրքը, մինչեւ հիմա անպատիժ կը մնայ, օրինակ ըլլալով իրեն ցեղակից Ազերիներուն:

Երբ ցեղասպան թուրքը, մինչեւ այսօր չէ պատժուած, ինչո՞ւ Ազերի թուրքերը միեւնոյն ցեղասպանութեան արարքները չգործեն հայերուն դէմ:

Այսօր՝ Մեծ Եղեռնէն 75 տարիներ յետոյ, մեր փոքրիկ հայրենի հողը, հայութեան վերջին յոյսը՝ կեղծ առաջնորդներու ձեռքով վտանգի ենթարկուած է:

Կը մոռնանք, որ Հայաստանը կը գտնուի Կոկորդիլոսի մը բերնին մէջ:

Նայեցէք այսօրուան Հայաստանի քարտէսը: Երեք կողմէ շրջապատուած է թուրքերով: Արեւմուտքէն՝ ցեղասպան թուրքերով: Արեւելքէն՝ Ազերի թուրքերով: Իսկ Հարաւէն՝ Պարսկաստանի Ազերի թուրքերով:

Եւ այս Կոկորդիլոսին բերանը օր մը կրնայ գոցուիլ, ճզմելով ամբողջ հայութիւնը, եթէ Ռուսական բանակը [Աստուած պահէ] Հայաստանէն հեռանայ»:

Նոյեմբեր 1989 - «Ռուբէն Սեւակի Գաղափարականը»

**

14 Հոկտեմբեր 1990-ին՝ Փարիզի մէջ, Ռուբէն Սեւակի նահատակութեան ոգեկոչման հանդիսութեան օրը, մեր հոգեղբայրը՝ Պրն. Ժիրայր Նայիրին, 1990-թ-ի Հայաստանի մէջ ստեղծուած շատ վտանգաւոր կացութեան մասին իր մտահոգութիւնները, բացառիկ պերճախօսութեամբ զեղուն հետեւեալ խօսքերով կը յայտնէր՝ «... Ցաւալի է նշելը, թէ տակաւին այսօր, մեր մէջ, Հայութեան մէջ կը

գտնուին անսրբագրելի հայեր, որոնք կը հաւատան թուրքին բարեկամութեան:

Եւ կը յուսան ու կը ջանան թուրքին հետ հաստատել առեւտրական, տնտեսական և մշակութային և այլ բնոյթի յարաբերութիւններ որոնք, անպայմանօրէն մեզ կը հասցնեն, ուշ կամ կանուխ՝ հայկական Դատին ուրացումին:

Եւ ցաւալին այն է, որ թուրքը շողմնելու և թուրքին հետ բարեկամութիւն և յարաբերութիւններ հաստատելու քաղաքականութիւն վարողները՝ հայութեան թշնամի կը ներկայացնեն Ռուսը, երբ ճիշդ՝ ասոր հակառակն է իրականութիւնը:

Հայութեան, Հայաստանի և մեր ազգային պետութեան շահերը կը պահանջեն, որ մենք Հայաստանը պահենք Միութեան անդամ: Անխախտ պահենք հայ և ռուս դարաւոր բարեկամութիւնը: Աւելի քան երբեք համոզուած պէտք է ըլլանք, որ Հայաստանի հայութեան գլխաւոր և մահացու թշնամին եղած է և կը մնայ «Բանթուրքիզմը»:

14 Հոկտեմբեր 1990, Փարիզ- Ժիրայր Նայիրի:

**

Հակառակ Ժիրայր Նայիրիի և հայրենասէր այլ մտաւորականներու ազդարարութիւններուն՝ Սիոնիստներուն գործակալ Լեւոն Տէր Պետրոսեան և տխրահռչակ Ղարաբաղի Կոմիտէն յաջողեցան Սիոնիստական ծրագիրը գործադրելու «Հայաստանը անջատել Ռուսաստանէն»:

Եւ իբր թէ՛ «Ազատ Անկախ Հայաստան մը ստեղծել»:

Հայաստանի այս ողբերգութեան մատնուելուն մէջ, այսօրեւն՝ դաշնակցականներուն լոզունգը եղող «Ազատ, Անկախ Հայաստան» կոչուած թակարդին մէջ մեր իյնալուն մեծագոյն պատասխանատուն՝ անփորձ և միամիտ Հայաստանի ժողովուրդն է:

Բայց ժողովուրդ մը կրնար միամիտ և անփորձ ըլլալ: Իսկ ո՞ր էին այն մեծխօսիկ և ինքնահաւան, իբր թէ յառաջդիմական կոչուած մտաւորականներու մեծ զանգուածը:

Բոլորէն առաջ անոնք ինկան Լ. Տէր Պետրոսեանին և անոր լծակից Դաշնակներու ծուղակը, և իրենց նստած ճիւղը կտրեցին:

**

«ՆԱՅԻՐԻ»ի առաջին թիւերէն սկսեալ, «Ազատ Անկախ Հայաստան»ի մասին մեր մտածումները յայտնած էինք:

Այստեղ, այժմէական կը նկատենք, այդ գրութիւններէն հատուածներ նշելու. «ՆԱՅԻՐԻ» 19 Ապրիլ 1997 - Իրականութեան մէջ ի՞նչ է «Անկախութիւնը»: Ո՞վ է իրական անկախը:

Հայաստանի այսօրուան «Անկախութիւնը» իր ապագան, վերապրելու կարելիութիւնը չապահովող անկախութիւն մըն է:

Ասիկա կը նմանի մահուան դատապարտեալի մը, որուն դէմ արձակուած վճիռի գործադրութեան վերջին օրերուն, իրեն կը տրուի իր փափաքածը, նկատելով, որ հետեւեալ օրերուն, մահուան ճամբորդութեան պիտի ձեռնարկէ:

Մեր կարգ մը հայ ծանօթներուն «Ազատ, Անկախ Հայաստան»ի հանդէպ ցուցաբերած միամիտ հրճուանքի արտայայտութիւններուն ականատես կ'ըլլանք երբեմն:

Օրինակ՝ անոնք կ'ուրախանան, որ NEW YORK-ի մէջ, Միացեալ Ազգերու շէնքին առջեւ, հայկական դրօշակը կը ծածանի:

Անոնք կ'ուրախանան հայկական թղթադրամը տեսնելով:

Անոնք կ'ուրախանան հայկական օդանաւին վրայ "ARMENIA" գրութիւնը տեսնելով: Եւ ուրախութեան արցունքներ կը թափեն Փարիզի մէջ տեղի ունեցող ֆուտպոլի մրցումի ատեն, հայկական քայլերգը մտիկ ընելով:

Այս բոլորը լաւ են: Իսկ յետո՞յ: Անոնք կը մտածե՞ն Հայաստանի ապագային մասին...:

Այսօր ունինք «Ազատ և Անկախ» Հայաստան մը, որուն բնակչութեան գրեթէ կէսը անգործութեան, տնտեսական ճգնաժամին պատճառած անօթութեան հետեւանքով հեռացած են Հայաստանէն:

Ունինք Հայաստան մը, որուն Սովետական շրջանին կառուցուած անթիւ ու անհամար գործարաններուն մեծ մասը դադրած են աշխատելէ:

Հայաստան մը՝ որուն պետական հաստատութիւններուն մեծ մասը ամլութեան մէջ են:

Հայաստան մը՝ որուն մտաւորական դասը, այսինքն՝ երկրի մը «ուղեղ»ներուն կարելոր մէկ մասը հեռացած են Հայաստանէն, և մնացած ուղեղներն ալ օրուան հացին կարօտ կը մնան:

Եւ այսօրուան Հայաստանը՝ արտասահմանէն ուղարկուած օգնութիւններով կ'ապրի:

Եւ պետական իշխանութիւն և մաֆիա, իրարու հետ զուգահեռ կ'ընթանան այնտեղ: Այսօրուան Հայաստանին այս տխուր վիճակը նկատի առնելով, մենք կրկին պիտի ըսենք.

Այսօրուան «Ազատ ու Անկախ», բայց աղքատ, գոյութեամբ փխրուն ու վտանգրւած ապագայով Հայաստանի մը տեղ, մենք հազար անգամ պիտի նախընտրէինք Սովետական Հայաստանին բարօրութեան և ապահովութեան շրջանը:

1991-թ.ի ազատ և անկախ Հայաստանէն հազար անգամ աւելի պիտի նախընտրէինք մնալ Սովետական հովանիի տակ, բայց ազգային ապագայով և յառաջդիմութեամբ երաշխաւորուած:

Հոգ չէ, թէ Նիւ Եորքի մէջ, Միացեալ Ազգերուն շէնքին առջեւ, հայկական դրօշակ չծածանէր:

Հոգ չէ, թէ ճամբորդական օդանաւին վրայ, «Արմենիա» չգրուէր:

Հոգ չէ, թէ հայկական դրամ պիտի չունենայինք:

ԲԱՅԾ, ԱՍՈՆԾ ՓՈՒԱՐԷՆ ՈՒՆԵՆԱՅԻՆԷ ԲԱՐՕՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԱՊՐՈՂ, ԱԶԳԱՅԻՆ ՈԳԻ ՈՒ ԶԱՂԱԶԱԿՐԹՈՒԹԻՒՆ ՈՒՌՃԱԾԸՆՈՂ ԵՒ ԱՅԴ ՈՒՂԻՈՎ ԱԻԵԼԻ ԲԱՒՏԱԻՈՐ ՎԱՂՈՐԴԱՅՆՆԵՐՈՒ ՅՈՅՍԸ ՄԵԶԻ ՆԵՐՇՆՉՈՂ ՀԱՅՐԵՆԻԷ ՄԸ: Աշխատէին մեր բոլոր գործարանները, մեր պետական բոլոր կառոյցները:

Իսկ մտաւորականները, գիտնականները և արուեստագէտները (→էջ 3)

«ՉԱՅՆ ԲԱՐՔԱՌՈՅ ՅԱՆԱՊԱՏԻ» ՆԿԱՏՈՒԱԾ... (Ծար էջ 2-էն)

շարունակէին հայկական ցեղային տաղանդով ստեղծագործել ու ապրիլ արժանապատիւ:

Եւ մեծ Ռուս Ազգը տեսնելով հայ ազգին երախտագէտ և եղբայրական ու հաւատարիմ բարեկամ-դաշնակիցի վերաբերումը, շարունակէր հայերուն օգնել: Ինչպէս որ ըրաւ, մինչեւ 1991-թ.ը Հայաստանին, որուն հողը իր ժողովուրդին միայն մէկ երրորդը կրնայ կշտացնել: **«ՆԱՅԻՐԻ» 3 Մայիս 1997**

Հայաստանի «անկախութեան» հարցի մէջ, մեզի համար շատ անհասկնալի և անբացատրելի պարագայ մը կայ:

Պահ մը ընդունինք, թէ Հայաստանի ժողովուրդը անփորձ և միամիտ էր, և խաբուեցաւ Սիոնիստ գործակալներուն և ասոնց ձայնակցող դաշնակցականներուն սուտ ազատութեան լոզունգներէն:

Բայց Սփիւռքի հայրենասէր մեծ զանգուածը, որ Սփիւռքի հայութեան մեծամասնութիւնը կը կազմէր, ինչպէ՞ս ինկաւ այս «անկախութիւն» ըսուած ծուղակը:

Ա՛յն Սփիւռքի հայրենասէր ժողովուրդը, որ 1920-թ.էն մինչեւ 1990-թ.ները բոլոր դժուարութիւններու, բոլոր սպառնալիքներու, նոյնիսկ մահուան վտանգին դէմ դրաւ և հաւատարիմ մնաց Սովետական Հայաստանին: Բայց յետոյ, 1988-թ.էն սկսեալ, «Արցախ», «Ազատութիւն» և «անկախութիւն» ըսուած «ձաբոտուքներուն» ծուղակը ինկաւ:

Եւ Սփիւռքի հայրենասէր հայութիւնն ալ, միւսներուն պէս, «կեղծ ազատութիւն»ի հոսանքին ենթարկուեցաւ:

Մենք, մինչեւ այսօր, Սփիւռքի հայրենասէրներուն անմիտ և հայավնաս այս կեցուածքը չենք կրցած ներել:

Եթէ սփիւռքահայութիւնը 70 տարուան իր գիտակից հայրենասիրութեան ոգիով շարժէր և դէմ կենար այս «Ազատութիւն»ի սուտ շարժումներուն՝ Հայաստանի հայերն ալ թերեւս ինքնագիտակցութեան կուգային և կը կասեցնէին արտաքին ու ներքին մութ ուժերուն այս դաւերը:

Բայց սփիւռքահայութիւնը չհասկցաւ բեմադրուող «թատրոնը» և ենթարկուեցաւ սադայէլական-սիոնիստական մեքենայութիւններուն:

Այս տեսակէտով մենք՝ սփիւռքահայութեան գէթ մեծամասնութիւնը պատասխանատու կը նկատենք՝ այսօրուան Հայաստանի անստոյգ և ապագայ չունեցող ճակատագրին:

Այո: Մենք, ամբողջ սփիւռքահայութիւնը, մանաւանդ՝ սփիւռքի հայրենասէր մամուլին ու հայրենասէր մտաւորականութեան մեծ մասը, նաե՛ւ Հայաստանեայց Առաքելական եկեղեցին կ'ամբաստանենք իբր մեղսակից բարգաւաճ Հայաստանը քանդող սիոնականներուն և ասոնց հետեւող ծանօթ կուսակցութեան որոշ պարագլուխներուն:

Թերեւս ըսուի, թէ Սովետական Միութիւնը քանդուեցաւ: Ի՞նչ կրնար ընել հայութիւնը:

Ճիշդ չէ: Նախ սա ըսենք, որ հայկական «Արցախի և Ազատութեան» շարժումները Սովետական Միութեան քանդուելէն 3 տարիներ առաջ [1987-1988-ին] սկսան: Ասկէ շատ ետք քանդուեցաւ Սովետական Միութիւնը: մանաւանդ՝ Հայաստանի «անկախութիւն»ի հռչակումէն յետոյ:

Բայց Ռուսական մեծ միութիւնը իր տեղն էր: Կրնա՞նք մոռնալ, «անկախ» Հայաստանի առաջին նախագահ Լ. Յէր Պետրոսեանի սա տոնքիշոթեան յոյսորտանքը, թէ՛ Ս. ՄԻՈՒԹԵԱՆ ԶԱՆԴՈՒՄԻՆ ԱՌԱՋԻՆ ԶԱՐԸ ԻՆՔ ԵՒ ԻՐԵՆՆԵՐԸ ՎԱՐ ԱՌԱԾ ԵՆ... ՊԵՐԼԻՆԻ ՊԱՏԸ ՓԾՐԵԼՈՎ Լ. ՂԱՐԱԲԱՂԻ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ:

Եւ հայերը, եթէ իրենց խելքը գործածէին, կրնային միանալ Մեծ Ռուսական Դաշնութեան :

Նաեւ կրնայ ըսուիլ, թէ «Հայաստանը Ռուսական դաշնութեան հետ սահման չունի»:

Ասիկա պատճառ մը չէ: Այսօր Պալթեան ծովեզրին վրայ գտնուող և Ռուսիոյ հետ սահման չունեցող Զալինիկկրատ-ի շրջանը կայ, որ Լիթուանիոյ սահմաններուն մէջ է, Բայց Ռուսական Դաշնութեան մաս կը կազմէ...:

...Եւ նոյնպէս այսօր շատ ուշ չէ:

Եթէ հայութիւնը իր խելքը գործածէ՝ Ռուսական Դաշնութեան մէջ կրնայ մտնել: ԵՒ ԱՅՍ Է ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ՝ ՍԻՆՆԻՍՏԵՐՈՒՆ ԵՒ ԹՈՒՐԵՐՈՒՆ ՍՊԱՆՍԱԼԻԶՆԵՐԷՆ ԸՆԴՄԻԾՑ ՓՐԿՈՒԵԼՈՒ ՄԻԱԿ ՄԻՋՈՑԸ: **24 Ապրիլ 2004**

«ԱՆԴՐԱՆԻԿ»
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Հ.Բ.Ը.Մ. - Հ.Ե.Ը.

Առաջին Անգամ Ըլլալով
Ա Ր Ա Գ Է Ո Ր Գ Ե Ա Ն
Լիբանանի Մէջ

Սիմֆոնիք Նուագախումբի Ընկերակցութեամբ
Խմբավար՝
ՅԱՐՈՒԹ ՅԱԶԼԵԱՆ
Պարային ու Բեմական Նորարարութիւններով

6, 7, 8, Մայիս 2004, ժամը 21:00,
«Զօր. էմիլ Լահուտ» Նորակառոյց Կեդրոն, Նազգաշ:

Գիճ՝ 15,000, 30,000, 50,000 և 100,000 Լ.Ո.
Տոմսերը կը վաճառուին ՀԲԸՄ Տեմիքեան Կեդրոն:
Հեռ: 04/523043/44, գրատուն Շիրակ 01/445829,
գրատուն Համազգային 01/241263,
Hotel Promenade 01/874774 և տիսֆօթէֆ JEKA:

ՏԱԳՆԱՊԱԼԻ ՎԻՃԱԿԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ...(Ծար էջ 1-էն)

Ակադեմիկոս Ռաֆայէլ Ղազարեան... Զարիուրելիւն Ապրիլ 13-ի գիշերը չէր, այլ՝ Քոչարեանի գնահատականը թէ՛ ցուցարար ժողովուրդի բիրտ ճնշումը ուստիկանութեան կողմէ՝ «փայլուն գործողութիւն» էր»:

Դաշինքի ընդհ. ֆարտուղար Վ. Դալլախեանի պայմանները, երկխօսութիւն սկսելու համար... Ազատ արձակել ֆաղաֆական բանտարկեալները, վերջ տալ ֆաղաֆական-ուստիկանական հետապնդումներուն, ուստիկան ուժերու պատասխանատուները պատժուելու են, պաշտօնանկել Պաշտպանութեան նախարարը, պաշտօնանկել Ընդհ. Դատախազը որ «քրեական գործ» յարուցած է Արդարութիւն դաշինքին դէմ:

**TÜRKLERİN (SÖZ DE) BILMEDİKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ
24 NISAN 1915-DE TÜRKLERİN GERÇEKLESTİRDİĞİ
ERMENİ SOYKIRIMININ 89 YILDÖNÜMÜ DOLAYISI İLE
LÂNETNAME**

1945-DE ALMANYADA YAHUDİLERİN KATLIAMININ SUÇLUSU, HITLER İDİ.

1915-DE OSMANLI DEVLETİNDE TÜRKLERİN GERÇEKLESTİRDİĞİ ERMENİ SOYKIRIMININ BAS SORUMLUSU KİM DİR?

1915-DE OSMANLI HÜKÜMETİNİN DAHİLİYE VEKİLİ OLAN TALAT PASA DİR.

1912-DE İSTANBUL NURUOSMANIYEDEKİ İTTİHAT VE TERAKKİ PARTİSİNİN GENEL MERKEZİNDE VERİLEN, ERMENİ MİLLETİNİ YOK ETME KARARINI, DAHİLİYE VEKİLİ TALAT PASA, NISAN 1915 TARİHİNDEN İTİBAREN TATBİK ETMİYE BAŞLADI.

TALAT PASA, OSMANLI DEVLETİNİN BÜTÜN VALİLERİNE GÖNDERDİĞİ SIFRELI TELGRAFLARLA, ÇOLUK, ÇOCUK, KADIN ERKEK, GENÇ YASLI DEMEDEN, BÜTÜN ERMENİLERİN ÖLDÜRÜLME EMRİNİ VERDİ.

KİM İDİ TALAT PASA?

EDİRNELİ, ÇİNGENE ASILLI BİR POSTA MEMURU İDİ SELANİKTE. FAKAT ZAMANLA İLERLEDİ. VE 1915-DE DAHİLİYE VEKİLİ İDİ.

FAKAT EN MÜHİMİ, İSTANBUL FARMASON GENEL MECLİSİNDE, EN BÜYÜK RÜTBE OLAN "ÜSTADİ AZAM" OLARAK BÜTÜN FARMASONLARIN BASKANI İDİ.

VE ÇİNGENE ASILLI TALAT, ASLINI İNKAR ETMEDİ.

MALÛM YA, İSTANBULDA İDAM MAHKUMLARINI ASAN CELLÂTLAR ÇİNGENE ASILLI İDİ.

VE ÇİNGENE TALAT, ERMENİ MİLLETİNİN CELLÂDİ OLDU. VE 24 NISAN 1915-TEN İTİBAREN ERMENİ MİLLETİNİ SOYKIRIMINA UGRATTI.

ERMENİ MİLLETİNİN CELLÂDİ, TALAT PASANIN AKİBETİ NE OLDU?

1914-1918 SAVASINDA OSMANLILAR, ALMANLARLA BERABER YENİLGİYE UGRADILAR.

VE ERMENİ SOYKIRIMININ BAS SUÇLUSU TALAT PASA VE DİĞER ELEBASILAR, 1918-DE İSTANBULDAN BİR ALMAN DENİZALTI GEMİSİNE BİNEREK KAÇTILAR, VE ALMANYAYA SİGİNDİLER.

TALAT PASA ALMANYADA BERLİN SEHRİNDE, BASKA BİR İSİM ALTINDA YASİYORDU.

BU ARADA, İSTANBULDA OSMANLI ORFİ-İDARE MAHKEMESİ TEMMUZ 1919-DA TALAT PASAYI VE DİĞER ELEBASILARI, ERMENİ SOYKIRIMININ SUÇLUSU OLARAK İDAM CEZASINA MAHKÛM ETTİ.

FAKAT SUÇLULARIN CEZASI YERİNE GETİRİLEMEDİ. ÇÜNKÜ HEPSİ KAÇMISTI.

VE ERMENİ SOYKIRIMININ SUÇLULARINI ARAYAN ERMENİ "NEMESIS" TESKİLATI BERLİNDE TALAT PASANIN SAKLANDIĞI YERİ BULDU.

VE 15 MART 1921 DE, "NEMESIS" TESKİLATININ ÜYESİ SOGHOMON TEHLİRİAN, ERMENİ MİLLETİNİN ÇELLÂDİ, İDAM MAHKUMU TALAT PASAYI, BERLİNDE HARDENBERGSTRASSE-DE TABANCA İLE ÖLDÜRDÜ.

VE ERZURUMDA 1915-DE BÜTÜN AİLE EFRADI TÜRKLER TARAFINDAN ÖLDÜRÜLEN SOGHOMON TEHLİRİAN, TALAT PASANIN İDAM CEZASINI İNFAZ ETTİ . (DEVAMI VAR) 3. 2.

**ԿԸ ԿՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ [ԻՐՐ ԹԷ] ԶԳԻՏՑԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ
24 ԱՊՐԻԼ 1915-ԻՆ, ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ԻՐԱԳՈՐԾԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ
ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 89-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՊԱՏԵՅՈՒԹԵԱՄԲ
ԱՆԷՄՔԱԳԻՐ**

1945-ին Գերմանիոյ մէջ կատարուած հրէական ջարդերուն պատասխանատուն չիթէլն էր:
1915-ին Օսմանեան պարտութեան մէջ թուրքերուն իրագործած հայկական ցեղասպանութեան
առաջնակարգ պատասխանատուն ո՞վ է:

1915-ին Օսմանեան կառավարութեան ներքին Գործոց նախարարը եղող Թալաթ Փաշան է:
1912-ին, Պոլսոյ նորուստանիյէ թաղը գտնուող Իթթիհատ և Թերաքքի կուսակցութեան ընդհանուր
կեդրոնին մէջ տրուած Հայ Ազգը բնաջնջելու որոշումը՝ ներքին Գործոց նախարար Թալաթ
Փաշան, Ապրիլ 1915 թուականէն գործադրել սկսաւ:

Թալաթ Փաշան, Օսմանեան պետութեան բոլոր կուսակալներուն ուղարկած ծածկագիր հեռագիր-
ներով՝ երեխայ կամ պատանի, կին կամ էրիկ մարդ, երիտասարդ կամ ծեր չնայած՝ բոլոր հայերը
սպաննելու հրամանը ուղարկեց:

Ո՞վ էր Թալաթ Փաշան:
Էտիքնեցի, ծագումով գնչու, թղթատարութեան պաշտօնեայ մըն էր Սելանիկի մէջ: Բայց ժամա-
նակ մը յետոյ, իր պաշտօնը բարձրացաւ:

1915-ին ներքին գործոց նախարար էր արդէն:
Բայց ամէնէն կարեւորը՝ Պոլսոյ ընդհանուր ֆարմասոնական ժողովին մէջ, ամենաբարձր աստի-
ճանով, «բարձրագոյն վարպետ»ի տիտղոսով, բոլոր ֆարմասոններուն նախագահն էր: ... Եւ ծա-
գումով գնչու Թալաթը՝ իր ծնունդը չուրացաւ:

Գիտէք թէ, Պոլսոյ մէջ, մահապարտները կախաղան հանող դահիճները, գնչու ծագում ունէին:
Եւ գնչու Թալաթը՝ Հայ Ազգին դահիճը եղաւ:

Եւ 24 Ապրիլ 1915-էն սկսեալ, Հայ Ազգը ցեղասպանութեան ենթարկեց:
ՀԱՅ ԱԶԳԻՆ ԴԱՅԻՃԸ ԵՂԱԾ ԹԱԼԱԹ ՓԱՇԱՅԻՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ԻՆՉ ԵՂԱԻ

1914-1918 պատերազմին, օսմանցիները, գերմանացիներուն հետ զինակից ըլլալով՝ պարտու-
թեան մատուցեցան:

Եւ հայկական ցեղասպանութեան առաջնակարգ պատասխանատուն Թալաթ Փաշան և միւս պա-
տասխանատուները 1918-ին Պոլսէն, գերմանական ընդճովեայով մը, Գերմանիա փախան և հոն
ապաստանեցան:

Թալաթ Փաշան Գերմանիոյ Պերլին քաղաքին մէջ, ուրիշ անունի մը տակ կ'ապրէր:
Մինչ այդ, Պոլսոյ մէջ Պատերազմական Ատեանը, Յուլիս 1919-ին Թալաթ Փաշան և միւս ղեկա-
վարները՝ հայկական ցեղասպանութեան պատասխանատուները նկատելով զիրենք մահուան դատա-
պարտեց:

Բայց յանցապարտներուն պատիժը կարելի չեղաւ գործադրել:
Որովհետեւ, բոլորն ալ փախած էին:

Եւ հայկական ցեղասպանութեան պատասխանատուները փնտոող «Նեմէսիս» կազմակերպու-
թիւնը, Պերլինի մէջ Թալաթ Փաշային պահուրտած վայրը գտաւ:

Եւ 15 Մարտ 1921-ին «Նեմէսիս» կազմակերպութեան անդամ Սողոմոն Թէհլիրեան՝ Հայ Ազգին
դահիճը՝ մահապարտ Թալաթ Փաշան Պերլինի HARDENBERGSTRASSE կոչուած փողոցին մէջ,
ատրճանակով սպաննեց:

Եւ այս ծելով Սողոմոն Թէհլիրեան, որուն ընտանեկան բոլոր անդամները թուրքերուն կողմէ
սպաննուած էին 1915-ին էրզրումի մէջ, Թալաթ Փաշային մահուան վճիռը գործադրեց:
(Շարունակելի)

Յ. Չ.

**ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՈՒԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ ՏԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Վերջերս Երևանի մէջ հրատարակուեցան
1.— Վլատիմիր Պետրոսեանի «Ռուբէն Սելակ եւ Մեր ժամանակը»
2.— Յովհաննէս Զիլինկիրեանի «Թուրքերուն [իրր թէ] Զգիտցած Իրականու-
թիւնները» 4 լեզուներով՝ մէկ հատորի մէջ, հայերէն, քրքերէն, ռուսերէն և անգլերէն:
Այս գիրքերէն ունենալ փափաքողները, նամակով մը կրնան դիմել, և մենք սիրով
կը նուիրենք և կ'ուղարկենք իրենց հասցէին:
Հասցէ՝ MAISON ROUPEN SEVAG
DOMAINE DU LOUP LE VERDON -B 06800 CAGNES SUR MER - FRANCE

Վերջերս թերթերէն տեղեկացանք, թէ Սիլվա Կապուտիկեան «Ջոչարեանի 1999-ին իրեն շնորհած» շքանշանը, 5 տարի յետոյ, նոր մտածեր է վերադարձընել «երկրի ղեկավար»ին:

Եւ թերթերուն մէջ, ալ ի՛նչ շոնդալից գրութիւններ Ս. Կապուտիկեանի մասին, ի՛նչ դրուատալից խօսքեր, և ինչ գովասանքներ կ'ուղղուին իրեն:

Մենք կը կարծենք, թէ հայերուն կա՛մ «յիշելու» կարողութիւնը տկարացած է, և կամ «տրամաբանութիւն» ըսուած շնորհքը՝ բնութիւնը գլացած է հայերուն:

Այս տաղանդաւոր տիկինն էր, որ Սովետական Միութեան մէջ, ամբողջ կեանքի ընթացքին, համայնավարութիւնը գովաբանեց:

Բայց, 1988-էն սկսեալ, դաշնակցականէ մը աւելիին վերածուեցաւ, և դրուատածը նզովեց:

Եւ հիմա՛ 1991-ին դաշնակցականներուն ալ ջանքով ստեղծուած և մինչեւ հիմա մասամբ անոնց իշխանութեան սակ գտնուող այսօրուան Հայաստանի նախագահ Ռոպերթ Ջոչարեանը քարկոծել սկսաւ: Մինչդէռ «Գործող նախագահ»ին այսօրուան ու երէկին միջեւ տարբերութիւն չկար: Եւ «Մեծ Տիկին»ը լաւ կ'ըներ եթէ, առաջի՛ն օրէն, մերժեր անոր կասկածելի ձեռքէն պատուանշան ստանալը:

Այս ի՛նչ անհաւատալի և աններելի գաղափարական բնոյթի փոփոխութիւններ են:

Եւ մանաւանդ, այս ի՛նչ անհաստատ նկարագրի տէր է եղեր (մեզի համար անարժանաբար) Ամենայն Հայոց Բանաստեղծուհի յորջորջուած Սիլվա Կապուտիկեանը:

**

Այս ու նման պատեհապաշտ ընթացքներու մասին, դեռ 1990-ին ժիրայր Նալիրին՝ արտակարգ պայծառատեսութեամբ իր ախտաճանաչումը կատարած էր: Այստեղ, այժմէական և անհրաժեշտ կը նկատենք նշել, մեր հոգեղբօր՝ 1990-ին ըսածները:

ԺԻՐԱՅՐ ՆԱՅԻՐԻԻՆ ԵԼՈՅԹԸ 4 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1990-ԻՆ ՓԱՐԻՋԻ ԲԱՐԵ-ԳՈՐԾԱԿԱՆԻ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԷՋ, ՌՈՒԲԷՆ ՍԵԻԱԿԻ ՆԱՀԱՏԱԿՄԱՆ 75-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՕՐԸ

«... Ռուբէն Սեւակ կը հաւատար, որ մտաւորականութիւնը Ազգին ուղեղը կը կազմէ:

«Չուկը՝ իր գլուխէն կը հոտի:

Ազգը իր մտաւորականներէն» – գոչած էր ժամանակին:

Իր ձգտումն և երազն էր՝ Հայ Ազգը օժտել իրաւ մտաւորականութեամբ, որ ան, իր հերթին, որպէս ուղեղ, կարենար կենսաւորել հայութիւնը: Մտաւորականը մնար իր բարձրութեան հաւասար:

Չմանի՛, օրինակի համար [եթէ թոյլատրէք՝ զուգահեռ մը պիտի կատարեմ այստեղ], Հայաստանի մտաւորականներուն այն հատուածին, մէկ մասին, որ հայութիւնը ճիշդ քաղաքականութեամբ և ուղղութեամբ առաջնորդելու փոխան, այս օրերուն մանաւանդ, հայութեան ապակողմնորոշումին պատճառ կը դառնայ:

Իր երէկի գրածն, հաւատացածը և դաւանածը՝ այսօր կը ժխտէ:

Մէկ ծայրայեղութենէն ելլելով՝ կ'իյնայ ուրիշ ծայրայեղութեան մէջ:

Սխալ մը շտկելու, դարմանելու ատեն, կը գործէ ուրիշ սխալ մը:

Եւ երէկի սեփական գրածները, հրատարակած հատորները, դաւանած տեսակետը կը ժխտէ այնպիսի ոգեւորութեամբ, կիրքով և բարձրագոյն, որ իրաւունք կ'ունենաս ըսելու, թէ այդ մարդիկ արդէօք վաղն ալ, իրենց այսօրուան պաշտած սուրբը չե՞ն դատապարտեր, չե՞ն քննադատեր և չե՞ն դրժեր:

4 Հոկտեմբեր 1990-Փարիզ- Ժիրայր Նայիրի

* *

1988-թ.ներուն, Սիլվա Կապուտիկեանի և ուրիշ «պատեհապաշտ» մը եղող ծանօթ նկարիչ Գրիգոր Խանճեանի, Երեւանի հեռատեսիլէն կատարած և Արցախեան և «Ազատ - Անկախ Հայաստանի շարժման» ցուցարարները քաջալերող ելոյթներուն երիզները դիտելու դժբախտութիւնը ունեցած էինք:

Մեծ ոգեւորութեամբ, և թագաւորէ մ'աւելի թագաւորական դարձած գաղափարականով, անոնք իրենց «Ազատութեան թունաւոր պատգամը» կուտային, այս երկու տոնքիշոտները, անգիտակից և միամիտ ցուցարարներուն:

Թերեւս այս երկուքն էին որ, իրենց սխալ խորհուրդներով շմորեցուցին Վազգէն Կաթողիկոսը, և ան, հայ ժողովուրդը ուժգին չզգուշացուց, որ Այս «Ազատութեան ցոյցերը» հայ ազգը դէպի կորուստ պիտի առաջնորդեն:

Ո՞ր գիտակից և հայրենասէր հայը չէր գիտեր, որ եթէ Հայաստանի վրայէն բարերար և կարգապահութեան երաշխիք ռուսական հովանին վերանայ, Հայաստան անիշխանութեան կը մատնուի ու կը սնանկանայ: Անգործութեան և անօթութեան կ'ենթարկուի:

Ո՞ր գիտակից և հայրենասէր հայը չէր գիտեր հայուն - գոնէ մեծ մասին - նկարագիրը... որ Հայաստանի մէջ [ներկայիցին հասկացութեամբ] «ազատութիւն» հռչակուած օրը, բոլոր այն հայերը որոնք Երեւանի ցոյցերուն «Ազատութիւն» կը պոռային, նախ և առաջ իրենք պիտի հեռանային Հայաստանէն:

Ո՞վ չէր գիտեր, որ «Հայ» ըսուած անհատը, ամենափոքր դժուարութեան առջեւ, պիտի մոռնար հայրենասիրութիւնը և ազգասիրութիւնը, նոյնիսկ պիտի մոռնար իր ընտանիքը, և պիտի լքեր իր հայրենի հողը:

Ո՞ր հայրենասէր և գիտակից հայը չէր գիտեր, թէ այս ազգայնասէր կարծուած Դաշնակցութեան որոշ ղեկավարներ, աշխարհակալութեան ձգտող Սիոնականներուն ծրագիրները գործադրող կամակատարներ էին:

Եւ ո՞վ չէր գիտեր, թէ Հայաստանի անկախութեան շարժումները, Սիոնիստներուն 1918-էն մինչեւ 1988 և մինչեւ այսօր հզօր Ռուսաստանը կործանելու և Կովկասէն հեռացնելու ծրագրին մէկ օղակը կը կազմէին:

Վերջերս, մեր մէկ բարեկամը, շատ անակնկալ ու անբացատրելի յայտնութիւն մը կատարեց:

